

---

«ԳՈՐԾՆԱԿԱՆ» ԲԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ Խ.  
ԱԲՈՎՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Մանկությունից տեսնելով օտարի ձնշումն ու հալածանքը, Խ. Աբովյանն առաջին հերթին անդրադարձավ ազգային հայրենասփրական թեմաներին և իր կյանքի զինավոր նպատակը դարձրեց ազգին ծառայելու խնդիրը: Դեռևս 1824 թ. գրած «Կարուուրիւն նախնի»՝ բանաստեղծության մեջ նա խոսում էր հայ ժողովրդի անցյալի ու ներկայի մասին, հակադրում երկու ժամանակները, ապրում հոգեկան տառապանքի ծանր բռնկենքր: Աբովյանը ցավով գրում է:

Պայթեն զգայարանքս, այլ ո՞հ, ես անզօր  
Կարօսիւ միայն լամ անօժանդակ<sup>1</sup>:

Դիմելով պատմական անցյալի հերոսներին և հայոց խորհրդանիշներին՝ Աբովյանը ռումանտիկական պատկերների միջոցով ներկայացնում է իր ժողովրդի հանդեպ տածած սիրո և կարոտի զգացումը, որ աստիճանաբար վերածվում է թախծի ու դառն մսորումների («Գալարին աղիքս, միտք իմ ցնորի»): Աբովյանը չի երազում փառքի ու գահի մասին, այլ ցանկանում է ուրիշների ցավին ցավակից լինել, նրանց «աչքի արտասուրքը սրբել»: Նա մարդկանց կտակում է միմյանց հանդեպ տածել շերմ սեր, լինել բարի ու ազնիվ.

Մարդիք, ա ին մարդիք՝ դուք ե՞րբ կզարդնեք,  
Որ սիրտ սրտի տաք, միմյանց քումակ ըլլիք:  
Իմանաք, մեր դրախտն ու կյանքն հենց է՞ն ա,  
Որ խեղճ ազգի ցավը կիմանա՞:

XVIII դ. Եվրոպական ազատազրական շարժումներն ու լուսավորական գաղափարները բարերար ազդեցություն էին թողնում Աբովյանի գրական հասարակական հայացքների վրա, և նա շարունակում էր արծարծել հայրենիքի սոցիալ-քաղաքական վիճակի, նրա ազատազրության խնդիրները: Աբովյանն աշխարհը համարում էր «ցաւոց բնակարան» և զայրանում էր, որ այդ աշխարհում ամենուրեք իշխում է անհավասարությունը: Նա երազում է զալիք երջանիկ օրերի մասին.

Եկեսցէ՞ արդեօր և մեզ ժամանակ,  
Զի անցցէ ի մէնց այս խիստ քո մուրիհակ.

<sup>1</sup> Խ. Աբ ո վ յ ա ն. Երկեր. Երևան, 1984, էջ 428:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 462:

*Տեսուր և մեք լոյս ի մերում գնդի,  
Չոր ձրի վայելեն համայն ազգը երկրի<sup>3</sup>:*

Շարունակելով միջնադարի բանաստեղծների գրական ավանդույթները՝ Աբովյանն անդրադառնում է նաև մեր ժողովրդին դարեր շարունակ ուղեկցող ցավալի պրոբլեմին՝ պանդխոտթյանը և ստեղծում դրա սոցիալական պատճառների գեղարվեստական պատկերը: Բանաստեղծի համար «աշխարհը ձեղքվել էր», գրկվել նախկին ամբողջականությունից և անցել գրողի «բանաստեղծական հոգու» միջով, ինչպես պատկերավոր արտահայտվում էր Հայնեն<sup>4</sup>: Աբովյանը գրում է «Երազը իմ անցին...», «Ողբերգություն», «Արհավիրք պանդխոտթեան» և այլ էլեգիաներ, ուր իշխում են տրտմությունն ու թախիծը, վիշտն ու հառաջանքը, որ համակում են պանդուիստ մարդուն, նրան դարձնում հայրենիքի և սեփական ձակաստագրի համար տառապող դրամատիկ կերպար: Նման էլեգիաներն եին գուցե, որ ձանապարի բացեցին հետագա շրջանի բանաստեղծների համար՝ շարունակելու արովյանական ավանդույթները, որովհետև նրանից հետո կյանքը չէր փոխվել, այլ, ընդհակառակը, առանձին հարցերում ավելի էր վատացել: Հիշենք Պեշիկթաշյանի, Դուրյանի, Բասիակյանի, Տերյանի, Չարենցի և մյուսների էլեգիաները, ուր արտահայտված են ժամանակի իրականությունից դժգոհ, անարդարության, հաղածանքի ու ճնշման դեմքնազող և ներքին ողբերգություն ապրող գրողների մտորումներն ու փիլիստիկայան խոհերը:

Ինչպես Վերածննդի մեծ հումանիստներն եին առաջ քաշում մարդու ազատության խնդիրը՝ այն անվանելով բնությունից տրված սուրբ օրենք, այնպես էլ Աբովյանն իր մի շարք գործերում սրտի անհուն ցավով ներկայացնում է օստար նվաճողների հակամարդկային արարքները, խիղճը փողի հետ փոխանակած վայրենաբարու մարդկանց դաժանությունը.

*Եւ Տերն անիրաւ մոռացեալ զզութն կամի առնուլ զվարձն  
Այն ինչ սիրելիք տան զհրաժարական զմիմիեամբք փարեալ<sup>5</sup>:*

Ժողովրդի ցավերով մտահոգ բանաստեղծի «կրակված սիրտը» լի է հեծեծանքներով ու ողբով, ցավով ու տառապանքով, քանզի տեսնում էր մոայլ իրականությունը («Երկիր ավերակ, դաշտք մեր անբնակ»), որ տանում էր դեպի ազգի կորստյան: Հիշենք Թումանյանի «Մեր նախորդներին» բանաստեղծությունը: Պոետը «կյանքի դաժան բանտում» չէր կարող ուրախանալ, որովհետև փշրվել են փրկության «ուկի երազները», ընկել են «սրտից և՝ երգ, և՝ աստված»: Աբովյանը մեծապէս ցանկանում էր սատար լինել իր ժողովրդին, դարմանել նրա ցավերը, սրբել նրա աչքի արտասուրը:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 443:

<sup>4</sup> Գ. Գ ե յ հ ե. Սօբր. սոչ. Տ. 6, Մ., 1983, ս. 394.

<sup>5</sup> Խ. Ա բ ո վ յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու. հ. 1, Երևան, 1948, էջ 260:

Դատապարտելով ժամանակի ախտաժետ իրականությունը՝ Արովյանը ցույց է տալիս, որ արդարությունը մովել է հետին պլան, ամենուրեք իշխում են եսամոլությունն ու փառասիրությունը, չեն գործում բարոյական օրենքները, մարդկանց հոգուն տիրել է «նախանձն չարազլուխ»։

Ում բարիս առնես, զարն ստանաս,  
Քարեղեն սրտից զի նչ փոյթ՝ հոգույդ մաշ<sup>6</sup>:

Արովյանն առաջ է քաշում մարդկային ազնիվ սրտի, բարոյական կատարելության, անչար ու բարի հոգու գոյության խնդիրը, առանց որոնց կյանքը կլինի դառն ու աղտեղի: Բանաստեղծի ողբը հնչում է որպես բողոք, որպես կատարյալ մարդու զաղափարով տոգորված հումանիզմ:

Արովյանի մարդասիրական զաղափարները խորապես դրսեորվեցին նաև արձակ գործերում: «Թուրքի աղջիկը» պատմվածքում հեղինակը խստորեն դատապարտում է տիրող հասարակական հարաբերությունները, ընտանեկան անառողջ բարքերը, որոնք կաշկանդում են մարդու անհատականությունն ու իրավունքը, ոտնահարում նրա նվիրական զգացմունքները: «Էսպես աշխարհքը քանդվի... Էսպես կյանքն ու օրը փուչ ըլի»<sup>7</sup>, – բողոքում է թուրքի աղջիկը և պատմում իր դժբախտ կյանքի ողիսականը:

Դատմվածքի զիսավոր հերոսը մարդու և աշխարհի հանդեպ ջերմ սիրով լցված երիտասարդն է, որը ծանր մտորումների մեջ խորապես ցավում է երկրում տիրող անարդարության, մարդու հանդեպ գործադրվող բոնությունների և հալածանքի համար: Նրան այդ աշխարհում պահում են միայն հարազատ ժողովրդի հանդեպ ունեցած ջերմ սերը, ազգին օգտակար լինելու ձգուումը, այլապես՝ «Քուոք վաղուց կըլեր իմ գերեզմանը»: Գրողը դատապարտում է ամեն մի սատանայական գործ, ցույց տալիս չարազործ մարդկանց էությունից խղճմտանքի բացակայությունը: «Երկնքի փառքն ու վարձքը բարյաց համար ա: Թե բարի էիր, չե ս կորչիլ»,<sup>8</sup> – ասում է Արովյանը և, լսելով անծանոթ աղջկա աղիողորմ լացի ձայնը, որոշում է անպայման իմանալ նրա վշտի պատճառը և օգնել: «Խանորդին, որ խսանորդու սուրք տեսնի, ու դարդ չանի, արտասունքը տեսնի, ու ինքն էլ լաց չըլի, ձենք, էն ողբալի ձենք լսի, ու ինքն էլ հետք չմղկտա, նա էլ ի նչ Աստված կունենա, ի նչ հոգի, ի նչ հավատ»,<sup>9</sup> – գրում է մեծ հումանիստը:

Դատմվածքն ամբողջովին թաթախված է մարդասիրության առինքնող զաղափարներով: Նրա հերոսի համար գոյություն չունի կրոնական կամ դավանանքի տարբերություն. կարևորը մարդն է իր հոգերարոյական աշխարհով, նպատակներով ու իհձերով, աստվածասիրությամբ: Այս պատմվածքը միաժամանակ փիլիսոփայական խորհրդածություն է մարդու բարոյական ինքնակատարելազործման, սիրու և

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ 229:

<sup>7</sup> Խ. Ա բ ո վ յ ա ն. Երկեր. Երևան, 1984, էջ 284:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 280:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 281:

գթարտության մասին: Աբովյանն անհուն ցավ է զգում, որ աշխարհը լցված է չարությամբ, իսպարված են ամուսնաքնուանեկան և որդիական հարաբերությունները, քարացած ու դաժան օրենքները հալածում են մարդուն, իսկ վերջինս մշտապես կարուտ է սիրո և կարեկցանքի: Մեծ լուսավորիչը առաջ է քաշում ամենազոր սիրո խնդիրը և ցանկանում է, որ ամենուր իշխի սիրո ջերմ զգացումը, սեր՝ ծնողի, զավակի, կնոջ, հայրենիքի, նաև Աստծո նկատմամբ, սեր, որ մարդուն մարդկայինին վերադարձնող ամենակարող ուժն է, մարդուն մարդ դարձնող ամենահաղթ զգացումը: Այնտեղ, ուր կա սիրո ջերմություն, բռնությունն անելիք չունի: Սիրուց են ծնվում գույք ու գթարտությունն, նրանից է վեհանում մարդու հոգին, մարդը բարձրանում է իր աշքում, սիրո էռթյունը դառնում է ամեն լավ բանի սկիզբ ու ամեն ինչից գերակա: Սերն էր, որ ինձ համարձակություն տվեց զրելու, «Վերք Հայաստանի» վեպի առթիվ խոստվանում է Աբովյանը:

Սիրո ամենազոր ուժի մասին խոսելիս զրողը օրինակ է բերում Քրիստոսին, որը պայքարեց ու նահատակվեց հանուն մարդու բարօրության: Աբովյանի կարծիքով Քրիստոսը մարտնչում էր հանուն զաղափարի, որի էռթյունը հանգում էր մարդկությունը կործանումից փրկելուն, հանուն արդարության և մարդու բարոյական կատարելագործման: Ըստ էռթյան, Աբովյանը նմանություն էր տեսնում Քրիստոսի և իր առաքելության միջև. չէ՞ որ ինքն էլ պայքարում էր իր ժողովրդի ազատության համար, բարողում էր սեր ու բարեկամություն: Վ. Գ. Բելինսկին «Նամակ Գոգոլին» հոդվածում, խոսելով Քրիստոսի առաքելության մասին, զրում էր. «Նա առաջինը մարդկանց ավետեց ազատության, հավասարության և եղբայրության ուսմունքը և նահատականությամբ դրոշմեց, հաստատեց իր ուսմունքի ճշմարտությունը»<sup>10</sup>:

Քրիստոսից բացի Աբովյանը մատնանշում է նաև նախաքրիստոնեական ժամանակների նշանավոր դեմքերին՝ Սոլյառտեսին, կրտսեր Կատոնին, Կորիոլանին և ուրիշների, որոնք ճշմարիտ հայրենասերներ էին, և նրանցից «շատը իրենց կյանքը մահու տվին՝ որ իրանց ազգը կամ վտանգից կամ թշնամեաց ազատեն, կամ նրանց մեկ օգուտ բերեն»<sup>11</sup>: Աբովյանը նշում է, որ մարդու երջանկությունն իրական աշխարհում է և ոչ թե հանդերձալ կյանքում, սերն է նրա վայելումը և ոչ թե աշխարհայինի մերժումը. այն և՝ իրերի կեցության, և՝ ճշմարտության չափանիշն է:

«Թուրքի աղջիկը» պատմվածքում, անդրադառնալով նախաքրիստոնեական ժամանակներին, երբ ուժի և գեղեցկության պաշտամունքին զուգընթաց իշխում էին սերն ու հաշոտությունը, երբ կրոնական բաժանումները դեռ թշնամանք չէին առաջացրել մարդկանց հոգիներում, և բնության զավակներն ապրում էին ուժի ու գեղեցկության զորավոր օրենքներով, Աբովյանն ափսոսանքով զրում է. «... ա ին, է ն, է ն - ժամանակը ինչպէ՞ ս էր ջերմ մարդի սիրտը, ինչպէ՞ ս արդար նրա միտքը, ինչպէ՞ ս պարզ նրա լեզուն ու խոսքը»<sup>12</sup>: Հետազայում մարդիկ չունկնդրեցին արարչի իմաստուն խորհրդին, որի պատճառով սերը փոխվեց ատելության, զգացմունքը՝ կրքի,

<sup>10</sup> Վ. Գ. Բ է լ ի ն ս կ ի ս. Ընտիր երկեր. Երևան, 1948, էջ 521:

<sup>11</sup> Խ. Ա բ ո վ յ ա ն ս. Երկերի լիակատար ժողովածու. հ. 7, Երևան, 1956, էջ 179:

<sup>12</sup> Խ. Ա բ ո վ յ ա ն ս. Երկեր, էջ 288:

միությունը՝ թշնամանքի: Արովյանի կարծիքով միակ փրկությունը վերադարձն է դեպի բնականն ու բնությունը և բնության հետ ձուլված արարչի երկրագությանն ու հավատարմությանը նրա պատճամներին:

Հայտնի է, որ Արովյանը ծանոթ էր և՛ Ծուսյովի բնապաշտական հայացքներին, և՛ Գյորեի պանթեիզմին: Ըստ Երևույթին, բնության հարազատ զավակի՝ մարդու ազատության զաղափարը Արովյանին տանում է դեպի հին դարերը, դեպի հեթանոսության ժամանակները, և նա, զուգահեռի վրա դնելով հազարամյակներով իրար բաժանող պատմական դարաշրջանները, դրանք հակադրում է իրար, շեշտում նոր ժամանակների բերած դժբախտությունը, երբ «սերը վերջացավ, թշնամությունն արմատացավ, ատելությունը գորացավ»<sup>13</sup>:

Արովյանը ցավով է գրում, որ անցած հազարամյակների ընթացքում մարդը հոգով կատարելագործվելու, ավելի բարիանալու փոխարեն նմանվեց զազանի և սկսեց հոշոտել իր նմանին: Բանաստեղծի հոգին տառապում էր աշխարհի անկատարության, չարի կամայականության ու հաղթարշավի պատճառով, և նա փիլիսոփայորեն եզրակացնում էր, որ ժամանակն ինքն է ստեղծել նման մարդուն, նրան դարձրել չար ու դաժան, ազահ ու ընչափաղ: Արովյանից տասնամյակներ հետո Թումանյանը պիտի գրեր.

*Բերանն արնոտ Մարդակերը էն անբան*

*Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան:*

*Չեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,*

*Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան*<sup>14</sup>:

Անհատի և հասարակության, անհատի և դարաշրջանի միջև առաջացած խորացող անջրագետը, չարի և չարության անզուսապ տիրապետությունը չէ՞ ը պատճառը, որ միջնադարի մտածող - խորհող ազնիվ անհատի՝ Համլետի շուրթերից հնչում էին ժամանակը դատապարտող խմաստուն խոսքերը. «Ժամանակն իր շավդից դուրս է սայթաքել, օ՛հ, բախտ իմ դժխւեմ, ինչու ծնվեցա, որ հենց է՝ սուլլեմ»<sup>15</sup>:

Այդպես էլ Արովյանի ժամանակն էր «իր շավդից դուրս» ընկել, և մեծ մարդասերը ցանկանում էր հաղթահարել ներքին ցավն ու տառապանքը, նվիրվել իր ժողովրդի ազատության դժվարին գործին, կենարար ուժ տալ իւեղձին ու անձարին և «կրակված հոգին» բացել հայրենակիցների առջև: Հենց այդ «կրակված հոգին» էր, որ մղեց նրան գրելու դարակազմիկ վեպը՝ հայրենասեր մարդու ողբք, սկզբից մինչև վերջ արտահայտելու համար իր անմնացորդ սերը հայրենիքի և ժողովրդի հանդեպ: Արովյանն այդ վեպով ապացուցեց, որ փոքրաթիվ ժողովուրդների կտրիճ զավակները ևս իրենց առնական հոգում ունեն ցերս սեր հայրենիքի հանդեպ, որ այդ սերը նրանք ժառանգել են իրենց դյուցազուն նախնիներից: «Վերը Հայաստանին», – գրում է Ավ. Խսահակյանը, – նաև մեր բողոքի, մեր ըմբոստության, մեր գոյամարտի հերոսապա-

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 289:

<sup>14</sup> Հովհաննես Դավիթյան մասին աշխարհագրությունը. Երևան, 1969, էջ 265:

<sup>15</sup> Վ. Շերեն աշխարհագրությունը. Երևան, 1991, էջ 35:

տումն է: Նա մեր դարի շողջողուն էպոսն է, մեր սիրազործությունների դյուցազնավեպը պարսից ոճիրների դեմ»<sup>16</sup>:

Վեպի առաջին գլխից սկսած Արովյանը խոսում է գործնական բարության և հումանիզմի մասին, դրանք համարում մարդուն բնութագրող կարևոր չափանիշ: «Մարդ ինչ անի, է՞ն իր առաջը կզա... Հարիր տարի կրլի, որ լուսահոգի Ապովը մեռել ա, էլի նրա ողորմին հա՛ կա, հա՛ կա... Ճամփի վրա մենծ իգոր անունը Հնդաստան ա հասել. էն ջաղղահ բաղը իր ձեռովը տնկեց, որ անց կենողը գնա, նրա բարությունը, վայելի...»<sup>17</sup>:

Վեպի կարևոր արժանիքներից մեկը ժամանակի սոցիալական կյանքի ճշմարիտ պատկերումն է, արդեն նշմարվող բոլժուական հարաբերությունների ավերիչ աղդեցությունը գյուղի և գյուղացու կենսակերպի ու հոգերանության վրա: Արովյանի ապրած տարիներին արդեն սկսվել էր նահապեստական տնտեսության քայլայմանը ընթացքը, որ հետո պետք է ավելի խորանար և առավել ճշմարիտ արտացոլվեր Պոռշյանի վեպերում: Արովյանն արդեն տեսնում էր շահագործման բուն էռությունը, էգորիզմի և զիշտաշական հատկությունների դրսորումը մարդկանց մեջ, հատկանիշներ, որ առաջացնում էին գյուղացիների արդար զայրույթն ու բողոքը: «... մարդի միս են ուտում, արինը խմում, – դժգոհում են գյուղացիները, – ո՞վ ձար ունի, իր զիսին ա անում. մերն էլ՝ աստված... Ամեն մարդ հենց իր ձին ա քշում ... ձրագը իր տակին ա լիս տալիս. աշխարքը՝ դմակ, մարդը՝ դանակ... բերանդ բաց անելիս՝ հող են ածում... շունը տերը չի ճանաչում... աշխարքս թալան-թալան ա...»<sup>18</sup>:

Արովյանը տառապում էր իր ժողովրդի նման վիճակի համար, և նրա գրչի տակից դուրս էին զալիս զգացմունքային խոր շերտեր ունեցող տողեր: Դրանք ոչ միայն առօրեական, այլև բարձրագույն գեղարվեստական զգացմունքայնության արտահայտություն էին, որ առաջին հերթին հանդես են զալիս որպես սոցիալական բովանդակության կրողներ: Այդ զգացմունքայնությունը, անհատական լինելով հանդերձ, իր մեջ ներառում է շատերի, նույնիսկ ամբողջ ժողովրդի համընդհանուր ապրումները: «Զգացմունքը, – գրում է Լ. Վիգոսովին, – նախապես անհատական է, իսկ արվեստի ստեղծագործության միջոցով դառնում է հասարակական...»<sup>19</sup>:

Արովյանն աստիճանաբար զարգացնում է իր տեսակետը մարդու գործունեության իմաստի վերաբերյալ և Աղասու հերոսական արարքների նկարագրության միջոցով վեր հանում ազատության կենսական անհրաժեշտության և պայքարի ճանապարհով դրան հասնելու կարևորությունը: Նրա ճշմարիտ դիստարկմամբ՝ հենց Աղասու ազգանվեր գործունեությունն է մարդու գնահատման զիսավոր չափանիշը, և այն պետք է դառնա ամեն մի բանական արարածի կարևոր հատկանիշը, եթե հայրենիքը և ժողովրդի կյանքը գտնվում են վտանգի մեջ: Դրանով Արովյանը ձգուում է

<sup>16</sup> Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկեր. հ. 4, Երևան, 1959, էջ 331:

<sup>17</sup> Խ. Ա բ ո վ յ ա ն. Երկեր, էջ 32:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 35-37:

<sup>19</sup> Л. С. В ы գ օ տ ս կ ի յ. Психология искусства. М., 1987, с. 233.

բացահայտել մարդկային գոյության իմաստն ու կենսափիլիստվայությունը, պատմության շարժման ներքին անհրաժեշտությունը:

Աղասու այրվող հոգին դարերից եկող իր ժողովրդի բարության այն հավերժական ակունքն էր, որից ծնվում են խիղճը, ազնվությունը, իսկ վերջիններս պահանջում են համարձակություն ու հերոսություն: Աղասին չէր կարող անտարբեր անցնել այն բազում թշվառությունների ու անարդարությունների կողքով, որ անօրենը պատճառում էր հայ ժողովրդին, որովհետև նա բարի էր ու ազնիվ, իսկ խիղճը ծնվում է մարդկային բարությունից. այն հոգու և մտքի պարզեց է, մի ներքին զգացում, որով մարդ իրեն հաշիվ է տալիս իր կատարած արարքների համար:

Արովյանը վեպի զիսավոր հերոսի միջոցով ներկայացնում է բարոյական մարդությամբ և հայրենիքին ու ժողովրդին անկաշառ նվիրումով ապրող այն մարդուն, որի համար խիղճը մարտումի հոգեպարար դրդիչ է, և որի հոգու վրա էր ծանրացել հայրենակիցների օրհասական վիճակը: Նա չէր կարող համբերել ու լոել, երբ «...անօրենքները մեզ հավատից էլ են քցել, հայից էլ. մալ են տեսնում մեզանում, խում են, աղջիկ են գտնում, քաշում են. մեզ կրակն են դրել, սաղ-սաղ էրում են, փոթքոթում...»<sup>20</sup>: Այսպանելով մարդու կողմից գործվող ոճիրը, Արովյանը հանձին այդպիսի ների տեսել է անհրավողին ու չարիք արարողին, բնության և մարդասիրության օրենքները ոտնահարողին: Այստեղ ազնիվ գրողի խոսքը հնչում է որպես պատզամ բարության ու բարի գործերի մասին. «Երկնքի արեգակի պես, երկրի հողի պես, դու, աստուծո պատկեր, բարի կա՞ց, բարություն արա՛, քեզ պահի՛ ր, լավություն արա՛... նրա ձեռագործք մի քանդի՛ ր, որ դու էլ մնաս շեն, դու էլ չի քանդվիս, հողին չի հավասարվիս»<sup>21</sup>:

Պատանի Վարդանի միջոցով մեծ հայրենասերը դիմում է ընթերցողի սրտին ու խղճին և ատելության կրակ բորբոքում անօրեն թշնամու դեմ: Միջնադարյան բանաստեղծների նման Արովյանը հոետորական հարցի ձևով մտորում է, թէ ինչու՝ Աստված և խաչը չեն պաշտպանում իրենց պաշտողին, ընդհակառակը, նրանք իրենց անարգողին են «դվաթ տալիս», աջակցում: Այդ անարդարության դեմ էլ ծառու է լինում գրողի ըմբոստ ողին, և նա իր հերոսների ձեռքին սուր է դնում՝ սատարելու անպաշտպան ժողովրդի ոտնահարված իրավունքները:

Բնությունից մարդուն տրված է ինքնապաշտպանության բնագոր, և երբ հարկ է լինում բարոյական բնտրություն կատարել, Աղասու նման ներքին հոգեկան հարստությամբ, խղճով ու բարությամբ օժոված ուժեղ մարդը չի կարող հանդուրժել անարդարությունն ու կեղծիքը, ժողովրդի շահագործումը և ձնշումն ու չըմբոստանալ: Այդպիսիները ծնվել են մարդկանց մեջ և նրանց համար ապրելու աստվածատուր շնորհքով, ուստի խիղճը նման է հերոսականության, որի շնորհիվ մարդը գիտակցարար նվիրվում է ժողովրդի փրկության գործին, դիմագրավում է դժվարություններն ու վախր՝ որոնելով ճշմարտությունը և ձգտելով հասնել դրան: Ֆ. Դոստովսկին ասում էր, թէ ճշմարտությունը կարելի է հասկանալ միայն անցնելով ցավի ու տա-

<sup>20</sup> Խ. Աբովյան. Երկեր, էջ 101:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 141:

ռապանքի միջով<sup>22</sup>: Այդպիսով խիղճը դառնում է մարդու քաղաքացիականության դրսորման կարևոր պայման, իսկ քաղաքացիականությունը և քաջություն է, և՝ համոզմունք, և պայքար:

Արովյանն իր ժողովրդի կենսունակության գաղտնիքը տեսնում էր այն բանում, որ հայր բարբարու նվաճողներին հակադրում էր ոչ միայն իր սուրբ, այլև իր աշխարհաշեն ողին, իր ծայրագույն լուսավորությունը: Հայերը խաղաղության օրերին, գրում էր նա, աշխատասեր են և հեզ, թշնամիների սրերի դեմ արիասիրտ և համբերատար, մտքի ու բարոյական ուժերի զարգացման մեջ՝ ձոխ և քնրուշ, ազգային սրբությունների անձեռնմխելիությունը պահպանելիս՝ հպարտ ու անընկճելի:

Արովյանն էր, որ առաջինը ներկայացրեց գաղափարական հերոսի իր իդեալը: Աղասու միջոցով վեր հանեց ժողովրդի շահերին անմնացորդ նվիրված հայրենասերի կերպարը: Պատոհական չէ, որ Շաֆֆին Աղասուն համարում էր առաջին հայ ֆիդային, որի հոգեկան ու ֆիզիկական էությունից էլ ծնվեցին մեր գրականության հետագա հերոսները, իսկ վեպի գաղափարական ու գեղարվեստական սկզբունքների վրա բարձրացավ հետագա հայ վիպագրությունը<sup>23</sup>: Այդ հանգամանքը նկատի ուներ Ս. Նալբանդյանը, երբ գրում էր. «Բարի հիշատակը արժանավոր Արովյանի «Վերը Հայաստանի» անունով գործը է ազգային բանաստեղծության մի հարազատ գաղափար... Ահա այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը... Նա ցույց է տալիս Աղասու ընկերներով, թե ոչ - բոլորովին սառել է հայկական արյունը Հայաստանի զավակների երակներում...»<sup>24</sup>:

## ИДЕИ “ПРАКТИЧЕСКОЙ” ДОБРОТЫ И ГУМАНИЗМА

В ПРОИЗВЕДЕНИЯХ Х. АБОВЯНА

*ОВАНЕС АЙВАЗЯН*

Р е з ю м е

Творчество Х. Абовяна стало поворотным явлением для армянской литературы. Он в первую очередь обратился к национальным патриотическим темам, к героям исторического прошлого и армянским символам, посредством романтических образов представил художественное описание социально-политических причин тяжелого положения народа. Как и гуманисты эпохи Возрождения, Абовян на первое место выдвигал вопросы свободы, нравственного совершенствования, честной и добродой души человека. В рассказе “Турчанка” он жестко осуждает господствующие общественные отношения, нездоровые семейные нравы и показывает

<sup>22</sup> Ф. М. Դօստօևսկի. Պисьма. Т. 4. М., 1959, с. 214.

<sup>23</sup> Հաֆֆի. Երկերի լիակատար ժողովածոլ. հ. 9, Երևան, 1958, էջ 324.

<sup>24</sup> Ս. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածոլ. հ. 1, Երևան, 1979, էջ 311:

отсутствие сострадания у злонравных людей. Этот рассказ одновременно и философское размышление о нравственном самосовершенствовании, о любви и милосердии человека. Для дальнейшего прогресса армянской литературы важное значение имел роман “Раны Армении”, где повествуется о “практической” доброте и гуманизме. Патриотической деятельностью главного героя Агаси Абовяна раскрыл смысл и жизненную философию человеческого существования, внутреннюю необходимость исторического движения.

### IDEAS OF “PRACTICAL” KINDNESS AND HUMANISM IN KH. ABOVYAN’S WORKS

*HOVHANNES AYVAZYAN*

#### S u m m a r y

Kh. Abovyan's creative work became a turning point in Armenian literature. First of all he turned to the themes of national patriotism, heroes of the past and Armenian symbols. By means of romantic scenes he gave an artistic description of social-political reasons for the nation's hardships. Like the humanists of Renaissance, Abovyan brought forth the problems of freedom, moral perfection and kindness of the soul. In his story “The Daughter of a Turk” he toughly disapproves of the existing social relations and unhealthy family atmosphere as well as shows the ruthless nature of some evildoers. This story is also a philosophical reflection on love, kindheartedness, moral self-perfection of the man. The novel “Wound of Armenia” had a great role in the further development of Armenian literature. The idea of “practical” kindness and humanism is covered in the whole novel starting from the very first chapter. By means of the main hero's (Aghasi's) devotion to the well-being of his nation, Abovyan revealed the sense of human existence, philosophy of life and development of history.